

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺՆԻ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Շարունակական ուսուցման բաժինը (այսուհետև բաժին) ՀՊԱՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումն է:
 2. Բաժնի իրավասությունները և գործունեության սկզբունքները որոշվում և կարգավորվում են համալսարանի սույն կանոնակարգով:
 3. Բաժինը հանրապետության գյուղատնտեսության ուսումնական հաստատությունների և գյուղատնտեսական արտադրության մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով իրագործում է ուսումնական և գիտամեթոդական աշխատանքներ:
 4. Բաժինը կարող է ունենալ համապատասխան ենթաբաժիններ, այդ թվում՝ համալսարանի և այլ ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման, գյուղատնտեսության արտադրության մասնագետների որակավորման բարձրացման և վերաորակավորման, գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող անձանց նախնական ուսուցման:
 5. Որակավորման բարձրացման ենթաբաժինը իրագործում է դասախոսների գիտատեսական, գիտամեթոդական մակարդակի բարձրացում, դասավանդման առաջավոր փորձի ընդհանրացում և տարածում, ուսումնական գործընթացում նորագույն մեթոդների և տեխնիկական միջոցների ներդրում:
 6. Նախնական ուսուցման ենթաբաժինը իրագործում է գյուղատնտեսության արտադրությամբ զբաղվող, բայց գյուղատնտեսական կրթություն չունեցող անձանց ուսուցումը գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունները գրագետ և պահանջվող մակարդակով վարելու համար:
- Ունկնդիրների որակավորման բարձրացման տարեկան պլանները հաստատվում են ՀՊԱՀ-ի ռեկտորի կողմից:

7. Բաժինը ուսումնամեթոդական համակարգում է իրականացնում համալսարանի կազմում գործող հենակետային վարժարանի և պետական գյուղատնտեսական քոլեջի, ինչպես նաև համալսարանի մասնաճյուղերի:

Բաժնի կառավարումը

8. Բաժինը ղեկավարում է բաժնի վարիչը, որին պաշտոնի է նշանակում և ազատում համալսարանի ռեկտորը, ուսումնամեթոդական կենտրոնի տնօրենի երաշխավորությամբ:

9. Բաժնի վարիչը՝

- ներկայացնում է բաժնի իր համալսարանում, այլ ձեռնարկություններում, կազմակերպություններում, հիմնարկներում,
- անմիջականորեն ղեկավարում է ուսումնական և մեթոդական աշխատանքները,
- ապահովում է ուսումնական պլանների և ծրագրերի կազմումը և իրագործումը,
- ձևավորում է բաժնի մեթոդական խորհուրդը,

10. Ենթաբաժինների աշխատանքների կատարումը իրագործվում է մեթոդիստների կողմից:

Բաժնի ունկնդիրները

11. Բաժնում իրենց որակավորումը բարձրացնում են՝

11.1. Գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասնագետներ, պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների ղեկավարներ, ֆերմերներ, գյուղատնտեսության արտադրության մեջ աշխատող այլ մասնագետներ:

11.2. Գյուղատնտեսության արտադրության մեջ զբաղված, բայց գյուղատնտեսական կրթություն չունեցող անձինք:

11.3. Ուսումնական հաստատությունների՝ ԲՈՒՀ-ի, քոլեջների դասախոսները:

12. Գյուղատնտեսական մասնագետները և գյուղատնտեսական կրթություն չունեցող անձինք գործուղվում են մարզային համապատասխան բաժինների

կողմից:

13. Գործողվող ուսումնական հաստատությունների ղեկավարների, դասերի սկզբից մեկ ամիս առաջ, բաժնի պետին հայտնում են գործողվող անձանց մասին՝ ներկայացնելով համապատասխան տեղեկանք:
14. Բաժինը կազմակերպում է համալսարանի դասախոսների որակավորման բարձրացման և ստաժավորման դասընթացը գիտահետազոտական, նախագծային, գիտաարտադրական ձեռնարկություններում և ԲՈՒՀ-երում:
15. Ստաժավորում անցնում են հիմնականում որակավորման բարձրացման դասընթացների մասնակցած անձինք:
16. Որակավորման բարձրացման բաժինը, ուսուցումն ավարտած անձանց, շնորհում է ՀՊԱՀ-ի կողմից հաստատված վկայական:
17. Պետական համակարգում աշխատող ունկնդիրները, ուսման ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում, հաշվետվություն են ներկայացնում ըստ ենթակայության:
18. Դասախոսների և գյուղատնտեսական մասնագետների որակավորման բարձրացմը հաշվի է առնվում նրանց վերընտրության (ատեստավորման) ընթացքում:
19. Անհրաժեշտության դեպքում ունկնդիրները ապահովվում են հանրակացարանով՝ գործողող կազմակերպության հաշվին:
20. Բաժինը, ընդունված կարգով, կարող է կատարել արտասահմանյան ուսումնական և գիտական հաստատությունների, ինչպես նաև գյուղատնտեսության արտադրության մասնագետների որակավորման բարձրացում:

Ուսումնամեթոդական և գիտական աշխատանքը բաժնում

21. Ուսումնական գործընթացը բաժնում իրագործվում է համալսարանի ռեկտորի կողմից հստատված ուսումնական պլաններով և ծրագրերով:
Ուսուցման ժամկետները սահմանվում է ՀՊԱՀ-ի կողմից՝ համաձայնեցված պատվիրատու կամ անհատների հետ:
22. Ուսումնական գործընթացը բաժնում իրագործվում է համալսարանի համապատասխան ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի, ինչպես

նան ՀՀ գյուղատնտեսության նախարարության գիտահետզական կենտրոնների և արտադրական ձեռնարկություննե բարձրորակ մասնագետների միջոցով:

23. Ուսումնական գործընթացը դասախոսների կարող է կատարվել աշխատանքից կտրված, ինչպես նաև աշխատանքին զուգընթաց՝ համաձայն ռեկտորի կողմից հաստատված որակավորման բարձրացման պլանի:

24. Ուսումնական գործընթացը բաժնում իրագործվում է հետևյալ ուսումնական պարապմունքների ձևով՝ դասախոսություններ, լաբորատոր և գործնական պարապմունքներ, սեմինարներ, կոնսուլտացիաներ, գիտաժողովներ, գործնական խաղեր, փորձի փոխանակում, արտադրական պրակտիկա և ստաժավորում առաջատար ձեռնարկություններում, արտադրական էքսկուրսիաներ, ունկնդիրների ինքնուրույն պարապմունքներ: Սահմանվում են գիտելիքների ստուգման հետևյալ ձևերը. ստուգարք, քննություն, ռեֆերատ, ստաժավորման կամ արտադրական պրակտիկայի վերաբերյալ հաշվետվություն, ավարտական աշխատանք:

25. Արտադրական պրակտիկան ունկնդիրների կողմից իրագործվում է հիմնականում համալսարանի տնտեսություններում, գիտական կենտրոնների փորձարարական կայաններում առաջավոր ֆերմերային տնտեսություններում:

26. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձակազմի քանակը բաժնում.

սահմանվում է համալսարանի համար սահմանված նորմերով:

27. Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքը կատարում են համալսարանի ամբիոնները: Բաժնում մեթոդական աշխատանքները կազմակերպելու, համակարգելու համար կազմակերպվում է մեթոդական խորհուրդ:

Ֆինանսական գործունեություն

28. Բաժնի բոլոր ծախսերը արտացոլվում են գյուղատնտեսության նախարարության կողմից հաստատված կարգով, համալսարանի ծախսերի նախահաշվում:

29. Ուսուցումը կարող է լինել անվճար՝ պետական պատվերով և վճարովի:

30. Բաժնի ուսումնամեթոդական բազան կարող է ստեղծվել ՀՀ կրթության և գիտության, և շահագրգիռ նախարարությունների, և տեսչությունների տրամադրած նյութական միջոցների, և հատկացրած դրամաշնորհների հաշվին:

Բաժնի լուծարումը

31. Բաժինը լուծարվում է ՀՊԱՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ՝ սահմանված կարգով: